



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212-MU 6-0710

Թիւ 22828
Փետրուար 3, 1971

Արժանաշնորհ
Տ. Գառնիկ #551. Հալլաճեան
Հովիւ Սրբոց Անուդեանց Եկեղեցւոյ
եւ Մախազան Ժիական Խորհուրդի
Ֆերլոն.

Սիրելի Տէր Գառնիկ,

Ստացած ենք 1971 Փետրուար 2 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը հա-
ղորդէք թէ 2եր նախագահութեամբ՝ Յունուար 31ին գումարուած 2եր Ժիական
ժողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը,
եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձե-
րուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր Ժիական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կա-
նոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Ժիական
Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ժիական Խորհուրդի նորրնաիր Դի-
ւանի անդամոց եւ եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու ատենապետներու անու-
նը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԶԵՊՈՍՏՈՎՅԱՆ
Առաջնորդ

Տիարք՝ Սարգիս Գետեւեան
ճան Սաճարեան
Ալֆրէտ Իսկեան
Բէքս Խաչիկեան
Սարգիս Կարիէլեան

**ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ
ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ**

REV. CARNIG HALLAJIAN, PASTOR

TEL. 791-1583



**St. Leon's
Armenian Church**

12-61 SADDLE RIVER RD.
FAIR LAWN, N. J.

TEL. 791-2862

Փետրուար 2, 1971

Գերաշնորհ
Տ. Թորգոմ Արք. Մանուկեան
Առաջնորդ Ամերիկայի Հայոց
Նիւ Եորք, Ն. Ե.

Սիրելի Սրբազան Հայր,

Այս նամակով կուզամ յայտնելու Ձերդ Սրբազնութեան որ Գեր-
լոնի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոժ Տարեկան Ծխական Ժողովը տեղի ու-
նեցաւ Կիրակի Յունուար 31, 1971ին, յաւարտ Ս. Պատարագի եկեղեց-
ւոյս մէջ: Սոյն ժողովին ներկայ էին 80 տրատու անդամներ:

Հետեւեալները երկու տարուայ համար ընտրուեցան Ծխական Խոր-
հուրդի անդամ. -

Սարգիս Պետեւեան	66 քուէ
Ճան Նաճարեան	59 քուէ
Ալեքէտ Ոսկեան	52 քուէ
Ռէքս Խաչիկեան	51 քուէ
Սարգիս Գաբրիէլեան	45 քուէ

Փոխանորդներ՝
Ճէյմս Սուճեան եւ Թամ Թոփճեան:

Վստահ ենք որ Ձերդ Սրբազնութիւնը շուտով կը վաւերացնէ վե-
րոյի շեալ անձերուն ընտրութիւնը, որպէսզի Ծխական Խորհուրդի նոր
կազմը շուտափոյթ սկսի իր գործունէութեան, ի պայծառութիւն եկե-
ղեցւոյս եւ ի փառս Աստուծոյ:

Մաղթելով Ձեր գործոց յաջողութիւն,

Մատչիմ ի համբոյր Ձերդ Ս. Աջոյն

Gen. Jeff Khajourian

Գառնիկ Բհնյ. Հալլաճեան
Հովիւ